02.06.2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՑ

Իրազեկում

(Հանրային հավաք և երթ անցկացնելու մասին)

ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ 2026 թվականի հունիսի 5-ին անկացնելու եմ հավաք-երթ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում՝ հանդես գալով որպես հավաք-երթի կազմակերպիչ ու ղեկավար: Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված իրազեկմանը ներկայացվող պահանջների մասով հետևյալ տեղեկությունը՝

1. Հանրային հավաք անցկացման վայր՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավան Առինջի 1-ին միկրոշրջանի 2/21 հասցեի շրջակայք:
2. Հավաքի անցկացման սկիզբ և ավարտ՝ 2026 թվականի հունիսի 5՝ ժամը 17:30 – 2026 թվականի հունիսի 5՝ ժամը 21:00:
3. Հավաքի նպատակ՝ նախընտրական քարոզչություն:
4. Հավաքի մասնակիցների սպասվող թիվը՝ 1000 մարդ:
5. Հավաքի ընթացքում օգտագործվելու են բարձրախոսներ, դրոշներ, ձայնի ուժեղարարներ: Հավաքի և երթի ընթացքում օգտագործվելու է նաև Պիկապ ավտոմեքենա՝ ձայնի ուժեղարարներով:
6. Հավաքի ընթացքում անցկացվելու է նաև երթ՝ սկսած 18:00-ից մինչև 21:00՝ հետևյալ ուղղությամբ՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավան Առինջի 1-ին միկրոշրջանի 2/21 հասցեի շրջակայք – Բաբաջանյան փողոց – Մարշալ Խուդյակովի 210/2-ի շրջակայք:
7. Հավաքին կարգադրիչներ չեն լինելու:
8. Արմեն Մանվելի Քոչարյանի՝ որպես հավաքի կազմակերպչի և ղեկավարի տվյալները

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը,
2. սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով,
3. սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ՝

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Հանրային հավաքի
կազմակերպիչ և ղեկավար
Արմեն Մանվելի Քոչարյան